



- ըստ նախապես հաստատված հարցաշարերի՝ օգտագործելով հեռավար ուսուցման տարբեր հարթակներ, որոնք համապատասխանում են ստորև նշված պայմաններին:
3. Ստուգարքով ավարտվող առարկայական դասընթացների գիտելիքների ստուգումը կազմակերպվում է գրավոր կամ բանավոր՝ համաձայն ԱԲՀ գործող գնահատման համակարգի բաղադրիչների: Ելնելով ստեղծված իրավիճակի առանձնահատկություններից՝ թույլատրվում է անցկացնել ինչպես երկու միջանկյալ ստուգումներ, այնպես էլ մեկ ամփոփիչ ստուգարք՝ նրան տալով երկու միջանկյալների միավորները /գնահատականները բաշխվում են համաձայն ամփոփիչ քննության սանդղակի/:
  4. Քննական դասընթացներն ավարտվում են ամփոփիչ քննությամբ: Ամփոփիչ քննությանը պարտադիր է ուսանողի ներկայությունը՝ տեսակապի միացմամբ: Ամփոփիչ քննությունն իրականացվում է բանավոր և/կամ գրավոր և/կամ համակցված (նախապես հաստատված հարցաշարի հիման վրա կազմված տոմսերով):
  5. Ամփոփիչ քննության ժամանակ ուսանողը բանավոր ընտրում է տոմսը, որից հետո այն տեղադրվում է էկրանին:
  6. Բանավոր քննության դեպքում, մասնակցին տրվում է առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և հարցերին պատասխանելու համար) (տոմսը պետք է պարունակի երեք հարց):
  7. Քննական տոմս վերցրած ուսանողը պարտավոր է ամբողջ ընթացքում տեսադաշտում պահել իր սեղանը և ձեռքերը:
  8. Քննության ընթացքում որևէ պատճառով էկրանի անջատման կամ տեսակապից դուրս գալու դեպքում, մասնակցիցը կրկին պետք է նոր տոմս ընտրի և պատրաստվի, առավելագույնը երկու անգամ, այլապես քննությունը համարվում է չհանձնած:
  9. Քննության ընթացքում ուսանողն իրավունք չունի օգտվելու այլ տեղեկատվական աղբյուրներից և պարտավոր է պահպանել ակադեմիական ազնվությունը:

### III. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է, որն իրականացվում է ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված հեռավար ձևաչափով՝ օգտագործելով հեռավար ուսուցման տարբեր հարթակներ, որոնք համապատասխանում են ստորև նշված պայմաններին:
2. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գտնվում է համալսարանում հատուկ կահավորված լսարանում՝ պահպանելով սոցիալական հեռավորություն:
3. Ամփոփիչ ատեստավորմանը մեկ օրվա ընթացքում կարող են մասնակցել առավելագույնը 24 շրջանավարտ:
4. Նախապես հաստատված ժամանակացույցը (օրը, ժամը մասնակիցների անունները) երեք շաբաթ առաջ էլեկտրոնային տարբերակով ուղարկվում է բոլոր շրջանավարտներին:

5. Ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է համաձայն ուսումնական պլանի: Ելնելով հետավար ուսուցման առանձնահատկություններից՝ այն կազմակերպվում է մեկ էտապով, բանավոր՝ ընդգրկելով տեսական գիտելիքները և գործնական հմտությունները (տոմսը պետք է պարունակի 2 հարց և 1 իրավիճակային խնդիր):
6. Ամփոփիչ ատեստավորման ժամանակ ուսանողը բանավոր ընտրում է տոմսը, որից հետո այն տեղադրվում է էկրանին:
7. Մասնակցին տրվում է առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և հարցերին պատասխանելու համար):
8. Ամփոփիչ ատեստավորմանը պարտադիր է ուսանողի ներկայությունը՝ տեսակապի միացմամբ: Քննական տոմս ընտրած շրջանավարտը պարտավոր է ամբողջ ընթացքում տեսադաշտում պահել իր սեղանը և ձեռքերը:
9. Քննության ընթացքում որևէ պատճառով էկրանի անջատումը, կամ տեսակապից դուրս գալու դեպքում, մասնակիցը կրկին պետք է նոր տոմս ընտրի և պատրաստվի, առավելագույնը երկու անգամ, այլապես քննությունը համարվում է չհանձնած:
10. Քննության ընթացքում ուսանողն իրավունք չունի օգտվելու այլ տեղեկատվական աղբյուրներից և պարտավոր է պահպանել ակադեմիական ազնվությունը:

#### IV. ԳՆԱՀԱՏԱՍԿԱՆԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

1. Ուսանողի կողմից ամփոփիչ քննությունների և ամփոփիչ ատեստավորման գնահատականը ենթակա է բողոքարկման, եթե ուսանողը համաձայն չէ գնահատականի հետ և ունի հիմնավոր ու բավարար հիմքեր բողոքարկման համար:
2. Ամփոփիչ քննության գնահատականի բողոքարկման դեպքում ուսանողը էլեկտրոնային տարբերակով դիմում է ներկայացնում դեկանին, որը երկու օրվա ընթացքում կազմում է հանձնաժողով և կազմակերպում լրացուցիչ քննություն՝ նախապես օրը և ժամը հայտնելով ուսանողին:
3. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը ենթակա է լրացուցիչ քննարկման և բողոքարկման՝ համաձայն Ավանդական բժշկության համալսարանի «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի 22-րդ կետի: